Արձանագրություն N 3

ՕՁԿՀ-ԷԱՃԱՇՁԲ-34/23 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 նոյեմբերի 2023թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Դավիթ Ղարիբյանը, անդամներ՝ Արմեն Հարությունյանը, Մարիա Պետրոսյանը և հանձնաժողովի քարտուղար՝ Հենրիկ Ղարիբյանը:

Օրակարգ

ՕՁԿՀ-ԷԱՃԱՇՁԲ-34/23 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման մասին

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Դավիթ Ղարիբյանը նիստը հայտարարեց վերսկսված, և տեղեկացրեց, որ «Պրինտարմ» ՍՊԸ-ն 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում նոր ֆայլ չի կցել համակարգում: Սահայն մասնակիցը դիմել է, և տեղեկացրել, որ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը իր կողմից կցվել են փաստաթղթերը, իսկ ծանուցման մասին չի տեղեկացել, քանի որ նամակը հայտնվել է «սպամ»-ում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և դիմել Ֆինանսների նախարարությանը՝ տվյալ խնդրի պարզաբանման վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել Ֆինանսների նախարարությունից պատասխան նամակ ստանալու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի շենքում՝ Վ.Սարգսյան 3/8:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0
Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Դ. Ղարիբյան

անդամներ՝ _____ Ա. Հարությունյան

_____ Մ. Պետրոսյան

քարտուղար _____ Հ. Ղարիբյան